

## Կարծիք

ԲԳ.00.02 - «Քաղաքական խնստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Սիրանուշ Սերոժի Մելիքյանի հայցման համար Սիրանուշ Սերոժի Մելիքյանի գործընթացները ՀՀ քաղաքական գործընթացներում Հոգեու անվտանգության հիմնախնդիրները թեմայով ատենախոսության վերաբերյալ

Սիրանուշ Մելիքյանի ատենախոսության թեման արդիական է և հրատապ: Հիրավի ժամանակակից եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների ուսումնասիրությունները սերտորեն կապված է քաղաքագիտական մի շարք կարևոր իրողությունների հետ, որին հեղինակն անդրադարձել է աշխատանքի մեջ: Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների արդի իրողությունների ներկայիս համատեքստում կարևորվում են երկու ինստիտուտների փոխհարաբերություններում առկա խնդիրների վերհանումը, քաղաքացիական հասարակության զարգացման, ժողովրդականացման իրողությունների ներքո պետակեղեցական հարաբերությունների փոխհամագործակցությունը, մասնավորապես՝ պետակեղեցական հարաբերությունների հայաստանյան մողելի ուսումնասիրությունը, հոգոր անվտանգության հիմնախնդիրների ընդգծումն ու վերջինիս կարևորումն ազգային անվտանգության համատեքստում:

Ատենախոսության հեղինակին հաջողվել է հիմնավոր վերլուծության ենթարկվել պետակեղեցական հարաբերությունների տեսահայեցակարգային հիմքերը քաղաքագիտության շրջանակներում և հանգամանալից գիտական վերլուծության ենթարկել թեման Հայաստանի Հանրապետությունում կատարվող քաղաքական կերպահուսումների, պետական կառավարման, անվտանգային մարտահրավերների տեսանկյունից:

««Եկեղեցի-պետություն փոխհարաբերության տեսահայեցակարգային հիմքերը, մոտեցումները, մողելները»» խորագրով առաջին գլխում տեսամեթոդանական ուսումնասիրության են ենթարկվել քաղաքական տեսաբանների մոտեցումները, մտքերը, հայեցակարգերը եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների շուրջ, եկեղեցի-պետություն փոխհարաբերության մողելները, թեմատիկ և գործառությային առանցքային օրինաչափությունները, ինչպես նաև՝ քաղաքացիական հասարակության և ժողովրդականացման համակարգերի ամրապնդման գործում եկեղեցու դերն ու նշանակությունը:»

Ատենախոսության երկրորդ՝ «Հայ առաքելական եկեղեցու և Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները» գլխում ուսումնասիրում ենք եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հայաստանյան մողելը՝ ուշադրություն դարձնելով պատմական փորձի, արդի հարաբերությունների, իրավահարաբերությունների, պետության, հասարակության կյանքում եկեղեցու իրականացրած տարրեր գործառութների, տարբեր

ոլորտներում ունեցած վրա: Վեր են հանվել հայաստանյան ձևաչափի առանձնահատկությունները, կերպափոխման հեռանկարները: Այնուհետև առանձնահատուկ ուշադրություն է դարձվել եկեղեցի-պետություն փոխհարաբերություններին հետհեղափոխական Հայաստանում և խորհրդարանական կառավարման անցման համատեքստում՝ ընդգծել են մարտահրավերները, խնդիրները, փոխհարաբերությունների կերպափոխման հեռանկարները:

Ատենախոսոսության երրորդ՝ «Հոգևոր անվտանգության հիմնախնդիրներ» զյուում ուսումնասիրվել է հոգևոր անվտանգության էությունը, հայեցակարգը, հիմնահարցի շուրջ քաղաքագիտական մոտեցումները և ուսումնասիրության մեթոդները, այնուհետև ուսումնասիրել ենք հոգևոր անվտանգության դրույթը պետությունների ազգային անվտանգության ռազմավարություններում՝ շեշտը դնելով Հայաստանի Հանրապետության օրինակի վրա: Երրորդ զյուում առանձին անդրադարձ է կատարվել պետության կարևորագույն ինստիտուտներից մեկի՝ բանակի և եկեղեցու համագործակցությանը՝ ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդության օրինակով, թեման ուսումնասիրվել է ՀՀ մոդելի առանձնահատկությունների, ինչպես նաև հոգևոր ու ազգային անվտանգությունների համատեքստում: Գյուում առանձին, թիրախային անդրադարձ է կատարվել նաև Արցախյան հակամարտության շուրջ Հայաստանի և Աղբեջանի հոգևոր առաջնորդների հանդիպումներին, այդ հանդիպումների արդյունքներին, ակնկալիքներին և նպատակներին: Վերջում ուսումնասիրել ենք Հայաստանում հոգևոր անվտանգության սպառնալիքները՝ համատասխանաբար առաջարկելով լուծման ուղիներ ու մեթոդներ:

Ատենախոսության նպատակը, դրան համապատասխան սահմանված խնդիրները և վերջիններիս իրականացման նպատակով կիրառված մեթոդներն ու գործիքակազմը ներդաշնակ են ու համակարգված: Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս բացահայտել, տարբեր տեսանկյուններից արժենորել պետակեղեցական հարաբերությունների կենսական դերը ազգային անվտանգության, ռազմական հասարակության կայացման, մասնակցային ժողովրդավարության, ժողովրդավարական կառուցների զարգացման և ամրապնդման գործում, վեր հանել դրանց դերակատարությունը հանրային և քաղաքական կառավարման արդիականացման գործընթացներում, բացահայտել դրանց գործունեությունը խոշրնդուռ ինստիտուցիոնալ և օրենսդրական բացերը, սոցիալ-հոգեբանական, սոցիոմշակութային գործոնները:

Ատենախոսության գիտական նորույթի առումով կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները. Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների բացահայտման, պետակեղեցական հարաբերությունների գործիքակազմում առկա խնդիրների վերլուծության, ազգային անվտանգության հոգևոր անվտանգություն ենթարածնում առկա խնդիրների քաղաքագիտական վերլուծության պրիզմայի ներքո պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների ուսումնասիրության առաջին փորձն է հայրենական քաղաքագիտության մեջ:

Աշխատանքի մեջ, որպես գիտական ուսումնասիրության առարկա, հեղինակն առաջին անգամ վեր է հանել քաղաքագիտական մտքի պատմության մեջ առկա

ուսումնասիրություններն ու մեթոդները եկեղեցի-պետություն փոխարաբերությունների մասին, առաջին անգամ եկեղեցի-քանակ համագործակցության շրջանակներում խորը քաղաքագիտական վերլուծության ենք ենթարկել ԶՈՒ հոգևոր առաջնորդության ինստիտուտը՝ դիտարկելով այն որպես հոգևոր ու ազգային անվտանգության ապահովման կարևորագույն օղակ: Ահա թե ինչու մեր ընտրած թեման, որպես ատենախոսության ուսումնասիրություն, իր թե՝ գործնական կիրառելիությամբ թե՝ տեսամեթոդաբանական հիմքով վերոնշյալ հիմնահարցերի շուրջ նորովի գիտական մոտեցում ու անդրադարձ է: Ատենախոսությունն, անկասկած, ունի նաև գիտագործնական նշանակություն: Հետազոտության կիրառական նշանակությունը պայմանավորված է արդի փուլում ժողովրդավարության ինստիտուցիոնալ կառույցների կայացման և զարգացման, հասարակության-իշխանության միջև առկա և խորացման միտում ունեցող անջրպեսի չեզոքացման, օրենսդրական դաշտի հետազա կատարելագործման վերաբերյալ առաջարկություններով: Հետազոտական աշխատանքի արդյունքները կարող են օգտակար լինել և ընդգրկվել քաղաքագիտության, պետության և իրավունքի տեսության, քաղաքացիական կրթության դասընթացներում: Հետազոտության մեջ կատարված առաջարկություններն ու եզրակացությունները կարող են օգտագործվել 3-րդ հատվածի հետ համագործակցության ռազմավարական նոր փաստաթղթեր ու ծրագրեր մշակելիս, օրենսդրական բարեփոխումներ իրականացնելիս:

Ատենախոսություն և պահանջվող մակարդակով կիրառում է ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ քաղաքագիտական և միջառարկայական մեթոդաբանություն և մեթոդիկա: Մասնավորապես, ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել են ինդուկցիայի, դեղուկցիայի, համանմանության, ինչպես նաև քաղաքագիտության համեմատական մեթոդները: Որպես հատուկ գիտական մեթոդ օգտագործվել է փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը:

Ատենախոսության շարադրման լեզուն և ոճը լիովին համապատասխանում են պահանջվող մակարդակին: Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտական հիմնահարցերի շարադրման հետևողականությամբ, հմտությամբ ու տրամաբանական հաջորդականությամբ: Համապատասխան ինդիքներ ձևակերպելու, դրանց համակարգային մեթոդներ գործադրելու և համապատասխան եզրահանգումներ կատարելու՝ ատենախոսության մեջ դրսուրված մշակույթը վկայում է ատենախոսի գիտահետազոտական աշխատանքներ կատարելու՝ ձևավորված կարողությունների մասին:

Այդուհանդերձ, ատենախոսությունում առկա են նաև թերություններ.

1/Աշխատանքի մեջ հպանցիկ է ուսումնասիրված պետակեղեցական հարաբերությունների միջազգային փորձը, որը կարևոր է հիմնահարցի լիրմորնման տեսանկյունից:

2/ Աշխատանքում հետազոտողը վեր է հանել բազմաթիվ գիտական ինդիքներ՝ հաճախ չառաջարկելով համապատասխան լուծումները:

3/ Հոգևոր-մշակութային անվտանգության սպառնալիքների ներկայացման մեջ՝ հղում անելով տարբեր մտածողների, իրողությունների՝ հեղինակը քիչ է ներկայացրել սեփական դատողություններն ու գնահատականները:

Այս թերությունները, սակայն, չեն գցում Սիրանուշ Սերոժի Մելիքյանի Մելիքյանի «Եկեղեցի-պետություն փոխարաբերությունները ՀՀ քաղաքական գործընթացներում. Հոգևոր անվտանգության հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության զիտական արժեքը և այն լիովին համապատասխանում է ԲԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական զիտությունների թեկնածուի զիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և հեղինակն արժանի է իր հայցած զիտական աստիճանին:

Քաղաքական զիտությունների թեկնածու, դոցենտ

Է. Քալանթարյան

Ստորագրությունը հաստատում էմ.

ԵՊՀ զիտական քարտուղար, պարմական զիտ. թեկն.

Լ. Հովսեփյան



« 23 » օգոստոսի 2021